ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/29, 04.03.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ԿԵԱՊ-ԳՀԾՁԲ-ԱՆՎՏ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար անվտանգության և պահակային ծառայությունների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

1. Պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 27.02.2019թ. ամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով ընկերության հայտը մերժելու մասին կայացրած որոշումը:
2. Պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:
3. Պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում ընկերության հայտը բավարար գնահատելու մասին:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

<< ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ >> ՍՊԸ

Հասցե՝ ք.Երևան, Կ.Ուլնեցու 59/5 շին. 3

ООО "ТРАНС-СФЕР"

Адрес: г.Ереван ул. К.Улнеци 59/5 зд. 3

04.03.2019թ

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող՝ <<ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ>> ՍՊԸ
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 59/5 շին 3
հեռ՝ 091993144
էլ. փոստ՝ trans.spher@gmail.com, hayk_khazaryan@mail.ru

Պատվիրատու՝ <<Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ներսիսյան 7/1

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«<<Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի
կողմից ԿԵԱՊ-ԳՀԾՁԲ-ԱՆՎՏ-19/5 ծածկագրով հայտարարված
գնանշման հարցման ընթացակարգ

Բողոք

Գործի հակիրճ նկարագրությունը և փաստերը.

<<Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի -ի կողմից ԿԵԱՊ-ԳՀԾՁԲ-ԱՆՎՏ-19/5 ծածկագրով հայտարարված ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկա է հանդիսանում անվտանգության և պահահակային ծառայությունները:

Ի թիվս այլ ընկերությունների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև <<ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.02.2019թ ժամը 11:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով արձանագրվել է Ընկերությանը առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին ընդունված որոշումը, այնուհետ հարցում է կատարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.02.2019թ ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ 19.02.2019թ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ներկայացված եզրակացության (այսուհետ՝ Եզրակացություն) համաձայն Ընկերությունը ունի ժամկետանց հարկային պարտավորություններ, որը մարվել է իմանալու պահից անմիջապես հետո:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.02.2019թ ժամը 11:00-ի տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի արձանագրվել է որոշում, համաձայն որի Ընկերության հայտը մերժվել է, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմնավորմամբ:

Տ0Տ4-19
04.03.2019թ.

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումը

Ընկերության հայտը մերժվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ունենալու հիմնավորմամբ:

Ընկերության կողմից ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ այդ պարտավորությունները վերաբերում են <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարներին, որոնց մասին Ընկերությունը հարկային մարմի կողմից որևէ իրազեկում չի ստացել և այդ տեղեկությունը կարող էր ձեռք բերել միայն Ընկերության հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից:

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն սահմանված վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևում <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարը որպես հարկային մարմի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

Ընկերությունը գտնում է, որ պետք է վերականգնվի նրա հետագա մասնակցությունը գնման գործընթացին, քանի որ դրա դադարեցումը պայմանավորված է եղել հարկային մարմի կողմից իրազեկված չլինելու հանգամանքով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձից

Խնդրում եմ՝

1. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 27.02.2019թ ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով Ընկերության հայտը մերժելու մասին կայացրած որոշումը:
2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել Ընթացակարգը չկայացած հայտատարելու մասին որոշումը:
3. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընկերության հայտը բավարար գնահատելու մասին:

Կից ներկայացվում է

1. Հարկ վճարողի անձնական հաշի քարտի քաղվածք 13.02.2019թ. դրությամբ առկա հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ 2 թերթից
2. Հարկային մարմնի կողմից տրված տեղեկանք 13.02.2019թ. դրությամբ առկա հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ 1 թերթից
3. 30000 ՀՀ դրամ Պետ տուրքի վճարման անդորրագիրը

Տնօրեն Հ. Պետրոսյան